ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 նոյեմբերի 2023 թվականի N 478-Ա

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍԻՆ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ, ՏԱԹԵՎ ԵՎ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՑ ՎԱՌԵԼԱՓԱՅՏ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետի 2023 թվականի նոյեմբերի 20-ի զեկուցագիրը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Լեռնային Ղարաբաղից 2023 թվականի սեպտեմբեր ամսին տեղահանված և Սյունիքի մարզի Սիսիան, Տաթև և Տեղ համայնքներում բնակություն հաստատած ընտանիքների համար «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Կապանի մասնաճյուղից վառելափայտ ձեռք բերելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 1657-Ն որոշման N 2 հավելվածի 01 բաժնի 08 խմբի 01 դասի 08՝ «Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձանց համար առաջնային անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների ծախսերի համար» ծրագրով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի համար նախատեսված ծախսերի «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով սահմանված ֆոնդից հատկացնել՝

1) Լեռնային Ղարաբաղից 2023 թվականի սեպտեմբեր ամսին տեղահանված և Սյունիքի մարզի Սիսիան համայնքում բնակություն հաստատած ընտանիքների համար վառելափայտ ձեռք բերելու նպատակով 5745600 (հինգ միլիոն յոթ հարյուր քառասունհինգ հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամի չափով գումար՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Լեռնային Ղարաբաղից 2023 թվականի սեպտեմբեր ամսին տեղահանված և Սյունիքի մարզի Տաթև համայնքում բնակություն հաստատած ընտանիքների համար վառելափայտ ձեռք բերելու նպատակով 1857600 (մեկ միլիոն ութ հարյուր հիսունյոթ

հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամի չափով գումար՝ համաձայն N 2 հավելվածի:

3) Լեռնային Ղարաբաղից 2023 թվականի սեպտեմբեր ամսին տեղահանված և Սյունիքի մարզի Տեղ համայնքում բնակություն հաստատած ընտանիքների համար վառելափայտ ձեռք բերելու նպատակով 3110400 (երեք միլիոն մեկ հարյուր տաս հազար չորս հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամի չափով գումար՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ սահմանված կարգով ապահովել վերոնշյալ գումարի վճարումը Սյունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Սեյրան Ավետիսյանի հաշվեհամարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնելու նպատակով:

3. Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Սեյրան Ավետիսյանին՝ սույն որոշման 1-ին կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված գումարները փոխանցելուց հետո եռօրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն:

21.11.2023

X

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Подписано: HARUTYUNYAN HAYK 1302840382

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ
ՓՈԽԱՐԻՆՈՂ **Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2023թ. նոյեմբերի 21
ք. Կապան